Հետազոտության ընթացքում իրականացվել է դեղատների հաճախորդների նախասիրությունների վերլուծություն՝ դեղատնան տեսականուց դեղեր և ԲՆԱ ընտրելիս: Ուսումնասիրվել են դեղերի կամ ԲՆԱ-ի գնման որոշման և գնահատման վրա ազդող գործոնները: Հայաստանում առաջին անգամ հայտնաբերվել և ուսումնասիրվել են դեղերի և ԲՆԱ-ի նկատմամբ սպառողական վարքի հոգեբանական (էթնոցենտրիզմ, թշնամանք, հեղինակություն և այլ) բնութագրերը:

Դեղատների հաճախորդների նախասիրությունների և դրանց վրա ազդող գործոնների ուսումնասիրությունը մանրածախ դեղագործական կազմակերպության ղեկավարությանը թույլ կտա մեծացնել ապրանքաշրջանառության ծավալը, իսկ դեղագործական հոգածության և խորհրդատվության որակը բարձրացնել նոր մակարդակի:

Հիմնաբառեր՝ *հոգեբանական բնութագիր, հաճախորդ, դեղատուն, դեղ:*

Արդիականությունը. Վերջին ժամանակներս սոցիալ-տնտեսական վերափոխումներն էականորեն ազդեցին ՀՀ դեղագործական շուկայի կառուցվածքի և զարգացման վրա և բերեցին դեղատների մրցակցային պայքարի սրացման: Մանրածախ դեղագործական կազմակերպությունների թվի աճի հետևանքով երևան եկավ սպառողի կողմից դեղատան ազատ ընտրությունը [1, 2]: Նման պայմաններում հաճախորդների ուսումնասիրությունը դեղատան աշխատակիցներին թույլ է տալիս նրանց հետ ստեղծել մշտական շփում, որի շնորհիվ բացատրելի է դառնում սպառողների կողմից գնման մասին որոշում կայացնելու մեխանիզմը, նրանց պահանջմունքների բավարարման աստիճանը [7]:

Դեղատան սպառողների կարիքները և պահանջմունքները հասկանալուց է կախված դեղատան մշտական հաճախորդների թիվը, հետևաբար և դեղատան շահութաբերության մակարդակը [4, 11]: Ցանկացած շուկայում, այդ թվում նաև դեղագործական, սպառողների վարքը նպատակահարմար է դիտարկել մարկեթինգային մոտեցման տեսանկյունից որպես բոլոր սուբյեկտների փոխհարաբերությունները նկարագրող առավել կիրառելի եղանակ [8, 9, 10]: Նման մոտեցումը հիմնված է սպառողների իրական վարքի վերլուծության և նրանց հիմնական տեսակների և օրինաչափությունների բացահայտման վրա [3, 12]:

Դեղատների վերջնական սպառողների մարկեթինգային հետազոտության ալգորիթմը բաղկացած է հետևյալ փուլերից.

1. հետազոտության նպատակադրում,
2. իրականացվող հետազոտության մեթոդների ընտրություն,
3. տվյալների հավաք,
4. դեղատների հաճախորդների հարցման անցկացում,
5. հետազոտության արդյունքների մշակում և վերլուծություն [5, 6]:

Տվյալ հետազոտության նպատակն է եղել բացահայտել սպառողական նախընտրությունները դեղեր կամ բժշկական նշանակության ապրանքներ (ԲՆԱ) ընտրելիս:

Հետազոտության նյութերը և մեթոդները

Դեղատների վերջնական սպառողների հարցումը կատարվել է անկետավորման և հարցազրույցների եղանակով: Հարցաթերթիկն ընդգրկել է հարցերի ստորև նշված 2 բաժինները, որոնք անհրաժեշտ էին և՛ ընդհանուր իրավիճակի մասին տեղեկություն ստանալու, և՛ սպառողական վարքի հետագա վերլուծության համար.

1. դեղեր կամ հարդեղագործական ապրանքներ ընտրելիս սպառողի վարքային բնութագիրը,
2. սպառողների սոցիալ-ժողովրդագրական բնութագրերը:

Հետազոտությունը կատարվել է ՀՀ դեղատների հաճախորդների միջև: Հարցմանը մասնակցել են 260 սպառողներ:

Ցանկացած ապրանքի, այդ թվում նաև դեղի կամ ԲՆԱ գնահատելու և այն գնելու մասին որոշում կայացնելու վրա ազդում են սպառողի անհատական հոգեբանական և սոցիալ-ժողովրդագրական հատկանիշները, ինչպես նաև ձեռք բերվող ապրանքի մասին տեղեկատվությունը: Այդ պատճառով էլ գնահատվող գործոնները բաժանել ենք 2 խմբի.

1. սպառողական գնահատելի գործոններ. սրանք այն գործոններն են, որոնք կապված են սպառողների սոցիալ-ժողովրդագրական և հոգեբանական բնութագրերի հետ:
2. ապրանքային գնահատելի գործոններ. սրանք այն գործոններն են, որոնք կապված են ապրանքի գործառնական բնութագրերի հետ:

Դեղերի ընտրության ժամանակ սպառողների վարքի տեսական մոդելը պատկերված է աղ. 1-ում:

Մեր կողմից դիտարկվել է յուրաքանչյուր խմբի գնահատելի գործոնների ազդեցությունը գնում կատարելու որոշման վրա:

Աղյուսակ 1.
Դեղերի ընտրության ժամանակ սպառողների վարքի տեսական մոդելը

Դեղ ընտրելիս սպառողի վարքի վրա ազդող գործոններ և բնութագրեր	
Սպառողային գնահատելի գործոններ	Ապրանքային գնահատելի գործոններ

Սոցիալ-ժողովրդագրական բնութագրեր	Հոգեբանագրաֆի-կական բնութագրեր	Դեղերին վերագրվող բնութագրեր	Դեղերի գործառնական (ֆունկցիոնալ) բնութագրեր
- Տարիք - Կրթություն - Սեռ - Սոցիալական դիրք - Եկամուտ - Այլ	- Մոտիվացիա - Սպառողական էթնոցենտրիզմ - Սպառողական թշնամանք - Հեղինակություն - Այլ	- Արտադրող երկիր - Արտադրող ֆիրմա - Մատակարար - Գին - Փաթեթավորում - Այլ	- Կիրառման ցուցումներ - Հակացուցումներ - Բաղադրություն - Փոխազդեցություն այլ դեղերի հետ - Դեղաբանական հատկություններ - Այլ

Սպառողական վարքն ուսումնասիրելիս առավել հաճախ կիրառվում են սոցիալ-ժողովրդագրական փոփոխականները: Դա կապված է 2 պատճառների հետ.

ա) սոցիալ-ժողովրդագրական բնութագրերը մյուս փոփոխականների համեմատ ավելի հեշտ են չափվում,

բ) կարիքները և նախընտրությունները, ինչպես նաև ապրանքների կիրառման ինտենսիվությունը կապված են սոցիալ-ժողովրդագրական հատկանիշների հետ:

Այդ պատճառով էլ թիրախային շուկայի բնութագիրը կազմելիս (օրինակ՝ անհատի առանձնահատկության հիման վրա) անհրաժեշտ է հետազոտել դրա կապը սոցիալ-ժողովրդագրական հատկանիշների հետ, որպեսզի որոշվի թիրախային շուկայի չափը և դրա առավել արդյունավետ գրավման եղանակները:

Հետազոտության արդյունքները

Կատարված հետազոտության արդյունքում պարզվել է, որ առավել կարևոր սոցիալ-ժողովրդագրական բնութագրեր են հանդիսանում սպառողների տարիքը, կրթությունը և եկամուտը:

Հոգեբանագրաֆիկան ուսումնասիրում է անձնական արժեքները, կյանքի ոճի հայեցակարգերը, մոտիվացիան, հոգեբանությունը և այլն [5]: Մեր հետազոտության ընթացքում որպես հոգեբանական գնահատելի գործոններ դիտարկել ենք.

- մոտիվացիան,
- սպառողական էթնոցենտրիզմը,

- հեղինակությունը (prestigiousness),
- սպառողական թշնամանքը:

Սպառողի դիմանկարը ստեղծելիս կարևոր է ուսումնասիրել որոշում կայացնելու շարժառիթը և ռիսկի աստիճանը:

Դեղատների սպառողների վարքը վերլուծելիս պարզվեց, որ սեփական օգտագործման համար դեղեր կամ ԲՆԱ ձեռք է բերում նրանց 46%-ը, իսկ հարազատների կամ ընտանիքի այլ անդամների համար՝ 44%-ը: Այսինքն, նրանց գրեթե կեսը «իսկական» սպառողներ են (դեղեր կամ ԲՆԱ ձեռք են բերում իրենց համար), իսկ մյուս կեսը «գնորդներ» են, քանի որ դրանք ձեռք են բերում այլ անձանց (ամուսնու, երեխաների, ծնողների, բարեկամների, ծանոթների) համար:

Դեղի կամ ԲՆԱ ընտրության խնդրի բարդությունը կախված է ռիսկի կարևորությունից, որը կապված է գնման հետ, այլ խոսքերով, սպառողի կատարած ընտրության հետևանքների միջակայքի անորոշությունից: Ռիսկի նվազեցման եղանակներից մեկը լայնածավալ տեղեկատվական որոնումն է:

Կատարված հետազոտությունը ցույց տվեց, որ մինչև դեղի կամ ԲՆԱ գնման մասին որոշում կայացնելը ռիսկի նվազեցման համար սպառողը օգտվում է շատ տարբեր տեղեկատվական աղբյուրներից (Տես՝ *Նկ. 1*):



Նկ. 1. *Տեղեկատվական աղբյուրներ, որոնք ազդում են դեղերի սպառողների վարքի վրա*

Սպառողների մեծ մասի համար (56%) տեղեկատվության հիմնական աղբյուրներ են հանդիսանում բժշկի և դեղագործական աշխատակցի (դեղագետի/դեղագործի) խորհրդատվությունները (պաշտոնական աղբյուրներ): Իսկ տեղեկատվության կոմերցիոն աղբյուրները (հեռուստատեսություն, ռադիո, մամուլ) զբաղեցնում են վերջին տեղը (11%):

Էթնոցենտրիզմը (հունարեն ethnos – ցեղ, ժողովուրդ և լատիներեն centrum – կենտրոն բառերից) ընդհանուր հայեցակարգ է կամ մարդկանց խմբի տեսակետ, որի համաձայն սեփական ժողովուրդը, սոցիալական խավը, ռասան դրվում է կենտրոնական դիրքում՝ որպես մյուսներից վերադաս և գերակայող [3]: Այս հասկացության հետ ասոցացվում են դրական (օրինակ՝ հայրենասիրություն, ազգային արժանապատվություն) և բացասական հետևանքներ (օրինակ՝ խտրականություն, նացիոնալիզմ, շովինիզմ, ռասիզմ):

Բարձր էթնոցենտրիկ սպառողը գնահատում է հայրենական ապրանքներն ավելի բարձր, քան արտասահմանյանները և առաջին հերթին ձգտում է գնել դրանք:

Դեղեր ընտրելիս էթնոցենտրիզմի արտահայտությունների վերլուծությունը ցույց տվեց, որ հայրենական դեղեր ձեռք են բերում սպառողների 12%-ը, 39%-ի համար դեղարտադրող երկիրը նշանակություն չունի, իսկ 49%-ը նախընտրում են արտասահմանյան դեղեր: Այսինքն մեր հանրապետությունում դեղերի սպառողները բնութագրվում են էթնոցենտրիզմի ոչ բարձր աստիճանով:

Արտասահմանյան դեղեր նախընտրող սպառողներն առավել հաճախ ձեռք են բերում Արևմտյան (55%) և Արևելյան (28%) Եվրոպայում արտադրվող դեղեր, որը ևս մեկ անգամ հաստատում է ընդունված այն կարծիքը, որ զարգացած երկրների ապրանքերը մեծ մասամբ գնահատվում են ավելի բարձր, քան զարգացող երկրների նույնանման ապրանքները:

Չնայած նրան, որ դեղերի սպառողները ցածր էթնոցենտրիկ են և հայրենական դեղերը գնահատում են արտասահմանյաններից ցածր, նման գնահատականը միշտ չէ, որ բերում է արտասահմանյան ապրանք գնելու որոշմանը, քանի որ որոշման վրա մեծ ազդեցություն է թողնում գինը:

Եթե հայրենական դեղը երկու անգամ ավելի մատչելի է արտասահմանյան համանման դեղից, ապա սպառողների 57%-ը ձեռք կբերեն հայրենականը, և միայն 35%-ը՝ արտասահմանյանը:

Ինչպես ցույց տվեց հետազոտությունը, առավել թանկարժեք դեղ ձեռք բերելիս սպառողի որոշում կայացնելու մեջ կարևոր դեր են խաղում արտադրող ֆիրմայի և երկրի հեղինակությունը (Տես՝ *Նկ. 2*):



Նկ. 2. *Դեղարտադրող երկրի կամ ֆիրմայի հեղինակության ազդեցությունը դեղի իրացման վրա*

Սպառողների գրեթե կեսը պատրաստ են ավելի շատ վճարել ֆիրմայի հեղինակության կամ դեղարտադրող երկրի իմիջի համար:

Որքան բարձր է գնահատում սպառողը արտադրող երկիրը, այնքան այդ երկրի ապրանքները ավելի մեծ շանս ունեն ստանալ բարձր գնահատական՝ անկախ նրանից, թե որ ոլորտին են վերաբերվում: Մյուս կողմից՝ բարձորակ ապրանքները, անկասկած, բարձրացնում են արտադրող երկրի իմիջը:

Որոշ հետազոտողներ ենթադրում են, որ արտասահմանյան ապրանքի գնահատականը կարող է ընդհանրապես չազդել գնում կատարելու որոշման վրա, եթե սպառողը թշնամաբար է տրամադրված տվյալ երկրի նկատմամբ: Նման իրավիճակում նրան ոչինչ չի ստիպի ձեռք բերել այդ ապրանքը: Որոշումը կայացվում է ոչ թե ապրանքի բնութագրերի հիման վրա, այլ կոնկրետ երկրի նկատմամբ սպառողի վերաբերմունքի: Եթե էթնոցենտրիկ սպառողը հայրենական ապրանքը գնահատում է ավելի բարձր, քան արտասահմանյանը, անկախ այն բանից, թե որտեղ է արտադրվել այդ արտասահմանյան դեղը, ապա թշնամաբար տրամադրված սպառողի համար արտադրող երկիրը շատ կարևոր է, քանի որ նա թշնամաբար է տրամադրված միայն որոշակի երկրի կամ երկրների խմբի նկատմամբ: Չնայած նրան, որ սպառողական

թշնամությունը հաճախ չի հանդիպում, սակայն կարող է բավականաչափ ազդել սպառողների կողմից ապրանքների ընտրության վրա:

Սպառողական թշնամության ուսումնասիրությունը պատկերված է նկար 3-ում: Դեղերի կամ ԲՆԱ սպառողների մոտ սպառողական թշնամությունը հանդիպում է հարցման մասնակիցների 35%-ի մոտ: Նրանց մեծ մասը դեմ են տրամադրված Թուրքիային (72%), Չինաստանին (12%), ասիական երկրներին (10%) և ԱՊՀ երկրներին (7%):



Նկ. 3. *Սպառողական թշնամանք՝ դեղարտադրող երկրների նկատմամբ*

Ապրանքային գնահատելի գործոնները կարելի է բաժանել 2 խմբի.

- գործոններ, որոնք կապված են դեղերի գործառնական (ֆունկցիոնալ) բնութագրերի հետ,
- գործոններ, որոնք կապված են դեղերին վերագրվող բնութագրերի հետ:

Դեղերի գործառնական բնութագրերն այն բնութագրերն են, որոնք կապված են դեղերի օգտակարության հետ (դեղերի բաղադրությունը, կիրառման ցուցումները, հակացուցումները, օգտագործման եղանակը, այլ դեղերի հետ փոխազդեցությունը):

Դեղերին վերագրվող բնութագրերն այն բնութագրերն են, որոնք կապված չեն բուժման արդյունավետության հետ, բայց ազդում են դեղերի ընտրության վրա: Այդպիսի բնութագրեր են արտադրող երկիրը և ֆիրման, մատակարարը, գինը, փաթեթավորումը և այլն: Դեղ ընտրելիս սպառողը ձգտում է ստանալ և օգտագործել իր համար մատչելի ողջ տեղեկատվությունը դեղի կամ ապրանքի գործառնական և վերագրվող բնութագրերի մասին:

Մեր հետազոտությունը ցույց տվեց, որ գործառնական բնութագրերից սպառողի համար առավել հետաքրքիր են դեղերի կիրառման ցուցումները (22%), օգտագործման եղանակը (19%), հակացուցումները (16%) և այլն (Տես՝ *Նկ. 4*):



Նկ. 4. *Սպառողներին առավել հաճախ հետաքրքրող դեղերի ֆունկցիոնալ հատկությունները*

Երկու ապրանքներ համեմատելիս և դրանց մասին լրիվ տեղեկատվություն ունենալիս սպառողը կգնահատի դրանք՝ ելնելով առաջին հերթին գործառնական բնութագրերից: Քանի որ դեղերը պատկանում են այն ապրանքների թվին, որոնք ունեն ներքին որակներ, այսինքն դրանց առավել կարևոր բնութագրերը դրսևորվում են վաճառքից հետո, կիրառման ժամանակ (օրինակ՝բուժական ազդեցությունը), ապա սպառողները հաճախ չեն ունենում տեղեկատվություն գործառնական բնութագրի մասին, քանի որ այն անհասկանալի է սպառողի համար: Այդ պատճառով էլ որոշիչ գործոններ են դառնում վերագրվող բնութագրերը:



Նկ. 5. *Սպառողների կողմից դեղեր ընտրելիս որոշ բնութագրերի նշանակությունը*

ՀՀ դեղատների սպառողների վարքն ուսումնասիրելիս հաստատվել է, որ հիմնական վերագրվող բնութագրեր են հանդիսանում դեղի գինը (32% սպառողներ), դեղարտադրող երկիրը և ֆիրման (23% և 20% համապատասխանաբար) (Տես՝ *Նկ. 5*): Ընդ որում, սպառողների մեծ մասը գտնում են, որ դեղի որակը կախված է արտադրող երկրից (79%) և ֆիրմայից (82%):

Եզրակացություն

Այսպիսով, սպառողների կողմից մանրածախ դեղագործական կազմակերպությունում առկա դեղերի կամ բժշկական նշանակության ապրանքների (ԲՆԱ) գնահատումը և դրանց գնման մասին որոշում կայացնելը բարդ գործընթաց է, որի վրա ազդում է այնպիսի գործոնների մի համալիր, որոնք կապված են ինչպես դեղի (ԲՆԱ), այնպես էլ սպառողի անձի հետ: Սպառողների նախընտրությունների մշտական դիտարկումը թույլ կտա մանրածախ դեղագործական կազմակերպությանը մեծացնել ապրանքաշրջանառության ծավալը, իսկ դեղագործական հոգատարությունը և ծառայությունների որակը բարձրացնել նոր մակարդակի վրա:

ЛИТЕРАТУРА

1. *Бегларян М.Г.* Особенности фармацевтического рынка Республики Армения. 11-ый нациоальный конгресс «Человек и лекарство». – М., 2004. – С. 860.
2. *Бишарян А.К.* Ситуационное моделирование системы лекарственного снабжения в Республике Армения. Автореферат дисс. к.ф.н. – М., 2001. – 50 с.
3. Большой психологический словарь // Под ред. Б.Г. Мещерякова, В.П. Зинченко. – М.: «Прайм-Еврознак», 2009. – 816 с.
4. *Василенко И.Л.* Изучение конкурентоспособности аптеки // Экономический вестник фармации, 2004. – № 8. – СС. 47–50.
5. *Гантер Б., Фернхам А.* Типы потребителей: введение в психографику. – СПб., 2001. – 304 с.
6. *Дремова Н.Б.* Исследование тенденций потребления лекартсвенных средств за рубежом // Фармация, 1992. – № 4. – СС. 49–53.
7. *Котлер Ф., Армстронг Г., Сондерс Д., Вонг В.* Основы маркетинга // Пер. с англ., 2-е европ. Изд. – К.–М.–СПб.: Изд. дом «Вильямс», 1998. – 1056 с.
8. *Крылова Г.Д., Соколова М.И.* Маркетинг. Теория и 86 ситуаций. – М.: Юнити-Дана, 1999. – 519 с.
9. Маркетинговые отношения «продавец-покупатель» // Экономический вестник фармации, 2003. – № 6. – СС. 23–24.
10. *Новиков А.С.* Анализ потребностей // Экономический вестник фармации, 2004. – № 3. – СС. 48–49.
11. *Kotler Ph., Trias de Bes F.* Lateral Marketing: A New Approach to Finding Product, Market, and Marketing Mix Ideas, John Wiley & Sons, 2003; P. 191.
12. *Stewart D.W., Zinkhan G.M.* Enhancing Marketing Theory in Academic Research. Journal of the Academy of Marketing Science. October 2006, № 34; PP. 477–480.

Информация о статье:
статья поступила в редакцию 09 марта 2021 г.,
подписана к печати в номер 10 / 2021 – 28.06.2021 г.

DOI: 10.53821/1829040X-2021.10-119

ЗНАЧЕНИЕ МЕДИЦИНСКИХ ДОКУМЕНТОВ В ОРГАНИЗАЦИИ ИНКЛЮЗИВНОГО ОБРАЗОВАНИЯ

Анна Айковна Мелконян
Студентка 2 курса кафедры психологии и специальной педагогики,
специальная педагогическая магистерская образовательная программа,
факультета специального и инклюзивного образования
АГПУ им. Хачатура Абовяна, г. Ереван, РА
anmelqonyan@mail.ru

Научный руководитель: **Светлана Сергеевна Мурадян**
К.п.н., доцент кафедры специальной педагогики и психологии,
заместитель декана по науке и международному сотрудничеству
факультета специального и инклюзивного образования
АГПУ им. Хачатура Абовяна, г. Ереван, РА
muradyansvetlana41@aspu.am

Аннотация. В данной статье представлена важность точной организации процесса инклюзивного образования в современной системе образования. Важным аспектом считается доступность медицинских карт детей с различными отклонениями в развитии, для эффективной организации дальнейшей образовательной деятельности.

Ключевые слова: *инклюзивное образование, медицинские карты, оценка, дети с отклонениями в развитии.*

THE IMPORTANCE OF MEDICAL DOCUMENTS IN THE ORGANIZATION OF INCLUSIVE EDUCATION

Melkonyan Anna
ASPU after Kh. Abovyan Faculty of Special and Inclusive Education,
Chair of Special Pedagogy and Psychology,
Master's program in Special Pedagogy
2nd year student, Yerevan, RA
anmelqonyan@mail.ru

Supervisor: **Muradyan Svetlana**
Deputy Dean for Science and International
Cooperation of ASPU Faculty of Special and Inclusive Education,
Candidate of Pedagogical Sciences, Associate Professor
muradyansvetlana41@aspu.am

Abstract. The article presents the importance of accurate organization of the inclusive education process in the modern education system. It is possible to have medical records of children with various developmental disabilities in order to effectively organize further educational activities.

Keywords: *Inclusive education, medical records, assessment, children with developmental disabilities.*

ԲԺՇԿԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԿԱՐԵՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ՆԵՐԱՌԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

Աննա Հայկի Մելքոնյան
Խ. Աբովյանի անվ. ՀՊՄՀ-ի Հատուկ և ներառական կրթության ֆակուլտետի

Հատուկ մանկավարժության և հոգեբանության ամբիոնի
Հատուկ մանկավարժություն մագիստրոսի կրթական ծրագրի
2-րդ կուրսի ուսանողուհի
anmelqonyan@mail.ru

Գիտական ղեկավար **՝Սվետլանա Սերգեյի Մուրադյան**
ՀՊՄՀ-ի Հատուկ և ներառական կրթության ֆակուլտետի
Գիտության և միջազգային համագործակցության հարցերով դեկանի տեղակալ
Հատուկ մանկավարժության և հոգեբանության ամբիոնի մ.գ.թ. դոցենտ
muradyansvetlana41@aspu.am

Ամփոփագիր: Հոդվածում ներկայացված է ներառական կրթության գործընթացի ճշգրիտ կազմակերպման կարևորությունը արդի կրթական համակարգում: Կարևորված է զարգացման տարբեր խանգարումներ ունեցող երեխաների բժշկական փաստաթղթերի առկայությունը հետագա կրթադաստիարակչական աշխատանքների արդյունավետ կազմակերպման հարցում:

Հիմնաբառեր՝ *Ներառական կրթություն, բժշկական փաստաթղթեր, գնահատում, զարգացման խանգարումներ ունեցող երեխաներ:*

До недавнего времени теоретически использовались общие медико-психологические термины, описывающие этиологические, анатомофизиолого-психологические различия людей с отклонениями в развитии. В эти годы системы специальных педагогических понятий были представлены в основном такими медицинскими терминами и понятиями, как «этиология», «симптом», «диагноз», «дефект», «коррекция», «недостаточность», «слепота» и др. Эти и другие термины, используемые в области медицины, психологии, долгое время находились в сфере специальных педагогических концепций, создавая путаницу и усложняя работу учителей, педагогов и профессионалов [2: 13; 3: 115].

Анализируя состояние инклюзивного образования на настоящий момент, можно говорить не только как об инновационном процессе, позволяющем осуществлять обучение и воспитание детей с разными стартовыми возможностями на различных ступенях образовательной вертикали. Это направление оказывает мощное влияние и на развитие самого образовательного процесса, в значительной степени изменяя отношения между его участниками. Разрабатываемые стратегии психолого-педагогического сопровождения детей с особыми образовательными потребностями и технологии сопровождения позволяют выстраивать отношения всех участников образовательного процесса на основе уважения их прав и особенностей. Все это обеспечивает, и дальнейшую гуманизацию образования, и формирование профессионального педагогического сообщества нового типа. Таким образом, определяется актуальнейшая необходимость научно-методического сопровождения и разра-

ботку программно-дидактических материалов и методических пособий для реализации этой важной задачи [1: 4].

В настоящее время стремительное развитие педагогической науки, накопление знаний, включая новейшие научные перспективы, за последнее десятилетие претерпели серьезные изменения в системе специальных педагогических терминов и понятий. Термины «дефект» и «дефектный» заменены терминами «ограниченные возможности здоровья», а термины «коррекция», «коррекционная педагогика», «корректирующее вмешательство» были заменены «специальное педагогическое сопровождение», «развивающая работа».

Используя современные технологии, образовательные программы, мы провели свое исследование, изучив медицинские карты детей, в следствие чего содержащиеся в них диагнозы, дали его роль и значение в образовательном процессе и в правильном организации инклюзивного образования [4: 205–225].

Так, исследование проводилось в Котайкском областном центре педагогико-психологической поддержки, изучены медицинские документы 3 детей, функциональные описания, протоколы, индивидуальные учебные планы. Нами было использована методика беседы с учителями, обучающими детей, членами группы профессиональной поддержки (См.: *Табл. 1*).

Таблица 1.

Описание изучения медицинских документов детей

Род	**Возраст**	**Медицинская диагностика**	**Предполагаемая потребность**
Женский	15 лет	Синдром Дауна	Умственная отсталость 3 степени (тяжелая)
Мужской	10 лет	Эпилепсия	Умственная отсталость 3 степени (тяжелая)
Мужской	7 лет	Аутизм	Умственная отсталость 2 степени (тяжелая)

В качестве первого шага мы изучили медицинскую карту, где был написан диагноз ребенку – «аутизм», «эпилепсия» и «синдром Дауна». Следует отметить, что вне медицинских записей эти синдромы в специальных педагогических областях имеют следующие термины: ребенок с аутизмом, ребенок с синдромом Дауна и т.д. В процессе оценки потребности ребенка большое значение придается наличию медицинского документа, со-

гласно которому в беседе с социальными педагогами, оценивавшими потребности обследованных нами детей, мы выяснили следующее:

1. Наличие медицинского документа желательно при оценке потребностей, это помогает специалистам по оценке в выборе правильного инструментария, в процедуре заполнения функционального описания, а также в дальнейших коррекционно-развивающих процессах.

2. Часто многие родители не хотят услышать диагноз, в следствие чего не представляют социальному педагогу настоящие данные и особенности развития ребенка. В этом случае, как бы родитель ни хотел скрыть поставленный ребенку диагноз, проблем не возникнет при наличии медицинского документа.

3. Доказано, что медицинские документы используются и в учебном процессе. Часто учителя не понимают, что делать, если у ребенка судороги. А если педагог ознакомится с медицинским диагнозом, изучит диагноз ребенка, то сможет оказать первую помощь, например, при эпилептических припадках.

На следующем этапе мы изучили документы по оценке потребностей и индивидуальные учебные планы. Можно подчеркнуть, что индивидуальные учебные программы и документы оценки потребностей ребенка плавно следуют за медицинским документом детей. Например, в функциональном описании представлены пункты, которые более подробно описывают диагноз ребенка, что, в свою очередь, поможет учителю и позже в работе поддержать ребенка в профессиональной группе поддержки. И уже в индивидуальном учебном плане представлены сильные и слабые стороны ребенка, препятствия, мешающие процессу обучения ребенка. Предположим, что в медицинской документации ребенку поставлен диагноз «аутизм», в этом случае в индивидуальной программе обучения учитель должен обратить внимание на обстановку класса, удаление ненужных предметов со стола, например, удаление твердых предметов из окружающей среды, наличие под рукой предметов первой помощи и т.д.

Таким образом, как индивидуальные учебные программы для трех изучаемых нами детей, так и документы по оценке потребностей содержали все вышеперечисленные пункты.

ЛИТЕРАТУРА

1. *Алехина С.В., Семаго Н.Я., Фадина А.К.* Инклюзивное образование. Выпуск 1. – М.: Центр «Школьная книга», 2010. – 272 с.
2. *Выготский Л.С.* Основные проблемы современной дефектологии // Собр. соч.: в 6-и тт. – М.: «Педагогика», 1982. – Т. 5. – С. 13.
3. *Глухов В.Н.* Дефектология. Специальная педагогика и специальная психология: Курс лекций. – 1872. – 115 с.
4. *Малофеев Н.Н.* Специальное образование в меняющемся мире. Европа, 2018. – 447 с.

Информация о статье:
статья поступила в редакцию 05 апреля 2021 г.,
подписана к печати в номер 10 / 2021 – 28.06.2021 г.

DOI: 10.53821/1829040X-2021.10-124

ПРИБЛИЖЕНИЕ К ОПТИМАЛЬНОЙ ТРАНСУРЕТРАЛЬНОЙ РЕЗЕКЦИИ ОПУХОЛИ МОЧЕВОГО ПУЗЫРЯ

Давид Ашотович Саргсян
Преподаватель кафедры хирургических болезней университета «АЙБУСАК»;
уролог МЦ «Шенгавит», г. Ереван, РА
d.a.sargsyan@mail.ru

Рубен Роменович Бороян
Д.м.н., профессор кафедры хирургических болезней университета «АЙБУСАК»;
МЦ «Шенгавит», г. Ереван, РА
boroyan@mail.ru

Аннотация. Полная трансуретральная резекция опухоли мочевого пузыря (ТУР мочевого пузыря) необходима для адекватной диагностики, определения стадии и лечения рака мочевого пузыря. TURBT обманчиво сложная и очень недооцененная процедура.

Неполная резекция является основной причиной высокой частоты рецидивов после первичной трансуретральной резекции и, следовательно, неоптимального ухода за нашими пациентами. Наша цель состояла в том, чтобы рассмотреть предоперационные, интраоперационные и послеоперационные соображения для выполнения оптимальной ТУРМТ. В рекомендациях Европейской ассоциации урологов, Международного общества урологов и Американской ассоциации урологов делается акцент на полной резекции всех видимых опухолей во время ТУР. В этом обзоре особое внимание будет уделено различным методам и методам лечения, включая фотодинамическую цистоскопию, внутрипузырную химиотерапию, и периоперационный контрольный список, который можно использовать для обеспечения полной резекции и снижения частоты рецидивов. Был проведен поиск в Medline / PubMed оригинальных и обзорных статей, касающихся трансуретральной резекции и лечения немышечно-инвазивного рака мочевого пузыря. Основные результаты были проанализированы и представлены в крупных проспективных, ретроспективных и обзорных исследованиях.

Ключевые слова: *рак мочевого пузыря, контрольный список, флуоресцентная цистоскопия, узкополосная визуализация, трансуретральная резекция.*

APPROACHING THE OPTIMAL TRANSURETHRAL RESECTION OF A BLADDER TUMOR

Sargsyan David
Lecturer at the Chair of Surgical Diseases of "HAYBUSAK" University,
urologist of "Shengavit" MC, Yerevan, RA
d.a.sargsyan@mail.ru

Boroyan Ruben
Professor at the Chair of Surgical Diseases of "HAYBUSAK" University,
"Shengavit" MC, Yerevan, RA
boroyan@mail.ru

Abstract. A complete transurethral resection of a bladder tumor (TURBT) is essential for adequately diagnosing, staging, and treating bladder cancer. A TURBT is deceptively difficult and is a highly underappreciated procedure. An incomplete resection is the major reason for the high

incidence of recurrence following initial transurethral resection and thus to the suboptimal care of our patients. Our objective was to review the preoperative, intraoperative, and postoperative considerations for performing an optimal TURBT. The European Association of Urology, Society of International Urology, and The American Urological Association guidelines emphasize a complete resection of all visible tumor during a TURBT. This review will emphasize the various techniques and treatments, including photodynamic cystoscopy, intravesical chemotherapy, and a perioperative checklist, that can be used to help to enable a complete resection and reduce the recurrence rate. A Medline/PubMed search was completed for original and review articles related to transurethral resection and the treatment of non-muscle-invasive bladder cancer. The major findings were analyzed and are presented from large prospective, retrospective, and review studies.

Keywords: *Bladder cancer, checklist, fluorescence cystoscopy, narrow band imaging, transurethral resection.*

ՄԻԶԱՊԱՐԿԻ ՈՒՌՈՒՑՔԻ ՆԵՐՄԻԶՈՒԿԱՅԻՆ ՄԱՍՆԱՀԱՏՄԱՆ ԼԻԱԿԱՏԱՐ ՄՈՏԵՑՈՒՄԸ

Դավիթ Աշոտի Սարգսյան
«ՀԱՅԲՈՒՍԱԿ» համալսարանի վիրաբուժական հիվանդությունների ամբիոնի դասախաս, «Շենգավիթ» ԲԿ-ի ուրոլոգ, ք. Երևան, ՀՀ
d.a.sargsyan@mail.ru

Ռուբեն Ռոմենի Բորոյան
Բ.գ.դ., «ՀԱՅԲՈՒՍԱԿ» համալսարանի վիրաբուժական հիվանդությունների ամբիոնի պրոֆեսոր, «Շենգավիթ» ԲԿ, ք. Երևան, ՀՀ
boroyan@mail.ru

Ամփոփագիր: Միզապարկի ուռուցքի ամբողջական ներմիզուկային մասնահատումը (միզապարկի TUR), անհրաժեշտ է համարժեք ախտորոշման, դասակարգման որոշման և բուժման համար: TURBT-ը բարդ և խիստ թերագնահատված գործողություն է: Ոչ լրիվ հեռացումը՝ առաջնային ներմիզուկային մասնահատումից հետո ռեցիդիվների առաջացման հիմնական պատճառն է և հետևաբար բերում է հիվանդների ոչ լիարժեք բուժման արդյունքների: Մեր նպատակն այն էր դիտարկել նախավիրահատական, վիրահատական և հետվիրահատական նկատառումներ՝ համարժեք TURBT-ի կատարման համար: Եվրոպական ուրոլոգիական ասոցիացիայի, Միջազգային ուրոլոգիայի հասարակություն և Ամերիկյան ուրոլոգիական ասոցիացիա ուղեցույցները շեշտը դնում է TURBT-ի ընթացքում բոլոր տեսանելի ուռուցքների ամբողջական հեռացման վրա: Այս դիտարկման մեջ հիմնական ուշադրությունը կկենտրոնանա տարբեր բուժման մեթեդների վրա, ներառյալ ֆոտոդինամիկ ցիստոսկոպիան, ներվիրահատական քիմիաթերապիան և այլն նախավիրահատական ստուգաթերթի վրա, որոնք կարող են օգտագործվել ամբողջական ներմիզուկային մասնահատման և ռեցիդիվների հաճախականության իջեցումը ապահովելու համար: Կատարվել է որոնում Medline / PubMed հարթակներում օրիգինալ և ակնարկ հոդվածներ գտնելու համար՝ կապված միզուղիների ներմիզուկային մասնահատման և միզապարկի ոչ մկանային ինվազիվ քաղցկեղի բուժման թեմայով: Հիմնական արդյունքները վերլուծվել և ներկայացվել են մեծ հեռանկարային, հետահայացքային և դիտողական ուսումնասիրություններում:

Հիմնաբառեր՝ *միզապարկի քաղցկեղ, ստուգաթերթ, լյումինեսցենտ ցիստոսկոպիա, նեղսպեկտրալ պատկերում, ներմիզուկային մասնահատում:*

Միզապարկի ուռուցքի ներմիզուկյային մասնահատումը (TUR) միզապարկ) ուրոլոգիայում ամենատարածված և թերագնահատված վիրահատություններից մեկն է: Չնայած այն համարվում է «հեշտ» վիրահատություն, բայց բավականին հաճախ պարզվում է, որ ուռուցքը ամբողջությամբ չի հեռացվել, ինչը նպաստում է կրկնության թվի ավելացմանը: Չնայած որ դա շատ քիչ է ուսումնասիրված (ըստ PubMed-ում որոնման արդյունքների, համեմատած շագանակագեղձի արմատական հեռացման բարդությունները, TURBT-ի բարդությունների հետ տալիս է համապատասխանաբար 2964 և 55 արդյունք), TURBT-ն համարվում է միզապարկի ոչ մկանային քաղցկեղի բուժման հիմնական մեթոդ (NMIBC) և 5-րդը իր տարածվածությամբ և ամենաթանկարժեք բուժվող քացկեղը արևմուտքում [2]: Ամերիկյան ուրոլոգիական ասոցիացիա (AUA), Եվրորոպական ուրոլոգիական ասոցիացիայի (EAU) և Միջազգային ուրոլոգիական հասարակության ուղեցույցներում (SIU) նշված է, որ հնարավորության դեպքում պետք է կատարել միզապարկի բոլոր ուռուցքների ամբողջական մասնահատում [3–5]: Բազմաթիվ ուսումնասիրություններում ասվում է այն մասին, որ կրկնակի TUR-ից հետո 30–70% դեպքերում լինում է մնացորդային ուռուցքներ [6, 7]: Նույնիսկ ակնհայտ լավ կատարված TUR-ը միշտ չէ, որ լինում է ամբողջական է ՝ կախված ուռուցքային պաթոլոգիայից [8, 9] Ուրոլոգներին օգնության հասավ մի քանի տեխնոլոգիական առաջադիմություններ, սկսած նախավիրահատական սգուգաթերթից: Մենք կցուցադրենք այդ մեթոդները, որպեսզի ընթերցողները կարողանան կատարել ամբողջական TUR:

PubMed և Medline-ի միջոցով կատարվել է էլեկտրոնային տվյալներ որոնում TURBT-ի տեխնիկային, TURBT-ի կրկնության անհրաժեշտության հոդվածներ, նվիրված է TUR-ի տեխնիկային, կրկնակի TUR անհրաժեշտությանը, ֆլյուրիսցենտ ցիստոսկոպիաի (FC), նեղսպեկտրալ պատկերաման (NBI) ընդդեմ սպիտակ լույսով ցիստոսկոպիայի (LCL) և ներմիզապարկային քիմիաթերապիայի հոդվածներին նվիրված հոդվածների ուսումնասիրությամբ: Վերլուծել են այս հոդվածներից ստացված ուղեցույցները: Այս վերլուծության արդյունքները օգտագործվել են TURBT-ի արդյունավետությունը բարելավելու և ուղեցույցներ ստանալու համար:

Ինչպես ցանկացած վիրահատության դեպքում, բուժումը սկսվում է ամբուլատոր պայմաններում: Այդ ժամանակ կատարվում է լիարժեք անամնեզի հավաքում և նպատակուղված ուրոլոգիական ֆիզիկալ զննում: Պատմությունը պետք է ներառի հիվանդի տարիքը, սեռ, անցյալ հիվանդության պատմությունը, ծխելու պատմությունը, միզապարկի քաղցկեղի կամ այլ չարորակ նորագոյացությունների հիվանդության պատմությունը, նախորդ հիվանդության պատմություն, վիրաբուժական միջամտության պատմություն, ներառյալ էնդոսկոպիկ բուժում և միզապարկի քաղցկեղի (BCa) ախտորոշումից հետո ցանկացած ներմիզապարկային թերապիա: Հիվանդի պատկերման ուսումնասիրությունները կարևոր է վերին միզուղիների վիճակը գնահատելու համար [10]: Անհրաժեշտ է նպատակային ուրոլոգիական ֆիզիկալ հետազոտություն, ներառյալ հիվանդի աշխատունակությունը և կազմվածքի գնահատումը: Հավելյալ քաշով հիվանդները կարող են խնդիրների առաջ կանգնել միզապարկի TUR-ի ընթացքում, քանի որ, որովայնի շրջապատումը կարող է դժվարացնել ուռուցքի մասնահատումը, որը տեղակայված է հատկապես միզապարկի առաջային կամ հետին պատը: Չի կարելի մոռանալ ուսումնասիրել շագանակագեղձը՝ տղամարդկանց մոտ [10]: Միզապարկի ուռուցքների բնորոշ արտահայտումը դա արյունամիզությունն է և, հետևաբար, մեր պրակտիկայում նախնական ախտորոշումը դրվում է ամբուլատոր ճկուն ցիստոսկոպիայի ժամանակ: Այս ընթացքում բժիշկը փաստաթղթավորում է ուռուցքի գտնվելու վայրը, չափը և կառուցվածքը: Կարող է օգտակար լինել օգտագործելով միզապարկի գծապատկեր [11]: Ուրոլոգը անմիջապես հասկանում է ուռուցքի աստիճանը և ստադիան, և փորձի հետ տալիս է լավ արդյունքներ: Հերը և միյուսները հայտնել են, որ 93% TaG1 ախտահարումները և 92% TaG3 կամ T1G3 ախտահարումները կարող էին ճիշտ ախտորոշված լինել ցիստոսկոպիայի միջոցով, համեմատած վերջնական պաթոլոգիայի հետ [12]: Եթե դա միզապարկի առաջնային հայտնաբերված ուռուցք է, ապա, հիվանդը ուղարկվում է վիրահատարան, միզապարկի TUR-ի ընդհանուր անզգայացմամբ: Եթե դա փոքր Ta, ցածր չարորակության ուռուցքի ռեցիդիվ է, ախատահարումը կարելի է բուժել սպասողական տակտիկայով կամ այն այրել ամբուլատոր պայմաններում: Բնականաբար պատմության մեջ թույլ տարբերակված BCa հաստատվել են տարբեր հետազոտություններում, որոնք կատարվել են 1987 թ-ին՝ Ջորդանի և այլոց կողմից: Հաջորդիվ՝ Պրուտի և այլոց կողմից: 1992 թ.-ին, ինչպես նաև մեր սեփական փորձիով [10, 12–16]: Նման ուռուցքները հազվադեպ են

սպառնում հիվանդի կյանքին և չեն պահանջում ավելորդ բուժում: Վիրահատության օրը պետք է հիվանդության պատմության զննում և կատարել ֆիզիկալ հետազոտություն: Հաճախ նպատակահարմար է կատարել ընդհանուր անզգայացում նյարդամկանային ամբողջական բլոկադայով, քանի որ այն թույլ է տալիս պարալիզացնել հիվանդին, ըստ անհրաժեշտության վիրահատության ընթացքում և արագ վերականգնվել վիրահատությունից հետո: Ողնուղեղային անզգայացումը նույնպես ընդունելի տարբերակ է, քանի որ այն ապահովում է, որ հիվանդը չշարժվի վիրահատության ընթացքում և առավելագույնս թուլացնի միզապարկը: Չնայած մենք երբեք չեն օգտագործում այս տեխնիկան, հաղորդվել է, որ ներմաշկային ներարկում obturator նյարդի բլոկադան արդյունավետ մեթոդ է adductor կամ obturator ռեֆլեքսի արգելափակման [17]: Վերջապես, ի լրացումը ստանդարտ նախավիրահատական լաբորատորիայի ցուցանիշների, թիմը պետք է վերլուծի հակագոուլանտների ցանկացած թերապիայի պատմություն, որը հիմնականում տարածված է տարեց հիվանդների մոտ [10]:

Ստուգաթերթը կարող է օգտագործվել՝ համոզվելու համար, որ անհրաժեշտ ամեն սարքավորում հասանելի է գործողության ընթացքում, և այդպիսով խուսափել ձգձգումներից, մինչ հիվանդը գտնվում է անզգայացման տակ: Լավ սովորություն է կանոնագարգված եղանակով կատարել TUR, որպեսզի՝ բաց չթողնել ոչ մի քայլ: Օպտիկական ընդլայնիչը կարելի է օգտագործվել էնդոսկոպիայի սկզբում՝ միզուկը լայնացնելու համար անմիջական հսկողության ներքո, միզապարկ մտնել առանց միզուկը վնասելու, ընթացքում խուսափել արյունահոսությունից և միզուկի պրոստատիկ հատվածը ճիշտ պատկերման համար [18]: Դրանից հետո տեղադրվում է ռեզեկտոսկոպ 26F կամ 28F անընդհատ հոսքով: Մեզը պետք է հավաքել և ուղարկել ցիտոլոգիայի՝ համաձայն կլինիկական պատկերի: Ուրետրոցիստոսկոպիան կատարվում է 12 և 70 աստիճանի ոսպնյակների միջոցով: Միզապարկի ծավալը պետք է լցվի ընդհանուր ծավալի մոտ 50–70%-ով՝ խուսափելով ավելորդ ընդլայնումից: Այս քայլը կարևոր է, քանի որ լրիվ լիքը լցված միզապարկը կարող է հարթեցնել լորձաթաղանթը և դժվարացնել պատկերամը կարցինոմա In situ-ի ժամանակ: Կրկին, ցիստոսկոպիայի ժամանակ, պետք է օգտագործել կանոնագարգված մոտեցում: Պետք է հայտնաբերել միզուծորանի բացվածքները: Ուռուցքի հայտնաբերման ժամանակ անհրաժեշտ է գրանցել ուռուցքի չափը և գտնվելու վայրը [10, 19]: Բրաուզին և այլոք [11] օգտագործում են միզապարկի գծապատկերներ-դիագրամներ, որպեսզի գրանցեն բոլոր ուռուցք-

ների տեղը: Հեղինակները նշել է, որ ծրագրային շեշտադրմամբ կատարված ռադիկալ TUR-ը օգտագործելով դիագրամներ, փորձառու վիրաբույժները կարողացել են նվազեցնել ռեցիդիվների քանակը [11]: Մենք օգտագործում ենք ինչպես լուսանկարներ, այնպես էլ գրավոր տեղեկատվության փաստաթղթեր, այդ ինֆորմացիան ստանալու համար: Մեր փորձով, ուռուցքի նկարները հիվանդության պատմության մեջ ավելի շատ տեղեկատվական է, քան գրված վիրաբուժական եզրակացությունը:

Մասնահատում

Փոքր պապիլյար ուռուցք կարելի է հեռացնել կամ բիոպսիոն սառը ակցանով կամ էլ բիոպսիոն սառը բաժակով, կամ օգտագործելով ստանդարտ TURT: Սառը մեթոդը վերացնում են այրման արտեֆակտները, ինչը բարձրացնում է պաթոհիստոլոգի վերլուծական հնարավորությունը: Ավելի մեծ ուռուցքներ պետք է հեռացնել համակարգված էլեկտրոկոագուլյացիայով: Ուրոլոգը կարող է ընտրել մոնոպոլյար կամ բիպոլյար մասնահատում: Մեր փորձը, ինչպես նաև այլոց փորձը ցույց են տալիս, որ դրանք հավասարապես անվտանգ և արդյունավետ են [20, 21]: Մենք փորձում ենք նվազագույնի հասցնել այրման արտեֆակտները և մեր ամեն միջամտությունից առաջ որոշվում է մասնահատման անհրաժեշտ խորությունը: Մենք հակակշռում ենք կարևորությունը՝ նմուշում միզապարկի մկանաթելերում իդնետիֆիկացիան, միզապարկի թափածակման ռիսկը և միզապարկի սպիավորումը: Կախված ուռուցքի տեղայնացումից՝ պետք է ընտրել ուղիղ անկյան դանակ-էլեկտրոդ: Մենք նախընտրում ենք ուղիղ անկյունային դանակ՝ միզապարկի եռանկյան ուռուցքների, միզապարկի վզիկի կամ առաջնային պատի ուռուցքի համար: Միզապարկի պատ կամ թեք դանակները իդեալական են հետին պատի կամ կողմնային պատի ուռուցքների ժամանակ: Միզապարկի մեծ ուռուցքներ մասնահատելիս [10] առանձին խորը շերտի ուղակելը՝ ընդգրկելով MP, կարող է նպաստել ճիշտ որոշում կայացնելուն և օգնել կատարել ամբողջական մասնահատում: Ստադիայի ճիշտ որոշման համար անհրաժեշտ է որ T1 ուռուցքի նմուշում լինի մկանային շերտի տվյալներ: Հերն ու Դոնաթը հետևել են մնացորդային ուռուքների առկայությանը 49% դեպքերում՝ առանց մկանային շերտի առկայության և 14% դեպքերում երբ առկա էր մկանային շերտ: Հեղինակներ նույնպես պարզել են, որ խոշոր ուռուցքների ավելի մեծ հատվածի մասնահատումը նպաստում է ախտաբանայան ախտորոշմանը, ուռուցքի միկրոսկոպիկ հսկողությանը [19]: Յան-

կեն և նրա գործընկերները հայտնեցին, որ ուռուցքից առնվազն 8 մմ ազատ ուրոթելիալ եզրը նվազում է տեղական ռեցիդիվների հաճախականությունը՝ 58%-ից 19% [22]: Բազմաթիվ այլ ուսումնասիրություններ առաջնային TURP-ից հետո, ցույց են տալիս մնացորդային հիվանդության բարձր մակարդակ: Կրկնակի մասնահատման ժամանակ (կախված ուռուցքի տեղայնությունից և քանակից) մնացորդային ուռուցք է հայտնաբերվել հիվանդների 76%-ի մոտ: Ավելի անփորձ վիրաբույժները և բազմաթիվ ուռուցքների առկայությունը մեծ ազդեցություն են ունեցել այդ հարցում [6, 23, 24]: Հայտարարվել է հետևյալ առաջարկությունը, որ բոլոր ուռուցքների նույնականացումը և մասնահատումը, որոնք նմուշում ունեն MP և ունեն ցածր 3-ամսյա կրկնման հաճախականություն, պետք է համարել իբրև TURMT-ի ադեկվատ լինելու մասին [25]:

Ախտորոշման հստակեցման և ռեցիդիվների մակարդակի բարձրացման՝ նպատակով, ներդրվել են առաջնային ուռուցի հեռաման բարելավման մեթոդներ: En bloc մասնահատումը ուղված է առանց ուռուցքի տարածման՝ ուռուցքի ամբողջական հեռացմանը: Այս մեթոդը ենթադրում է, որ այն «առանց հպման» կբերի մասնահատման արդյունքներ և ռեցիդիվներ քանակի բարելավմանը: En bloc էնուկլեացիայի մի շարք տարբերակներ՝ ինչպիսին են էնդոսկոպիկ դանակի մոդիֆիկացիան, լազերային էնուկլեացիան և ջրի շիթով էնուկլեացիան տարածում են գտել վերջին շրջանում և նրանց արդյունավետությունը և անվտանգությունը հետազոտվում է: Բոլոր այս մոդիֆիկացիաներին բնորոշ է լորձաթաղանթի ցիրկուլյար հատումը, ուռուցքի եզրերից բավականաչափ հեռավորության վրա, ուռուցքը շրջանակելով և հետագա բուժման En bloc եղանակով սահմանազատելով: Որն էլ բերում է ուռուցքի ամբողջական հեռացման՝ մկանային շերտի ներառմամբ [26]: Յանկեի և միյուսների զեկույցը [27] ցույց տվեց, որ ավելի փորձառու վիրաբույժները կատարում են ավելի լիարժեք մասնահատում և ունենում են ռեցիդիվների ավելի ցածր հաճախությունը: Հեղինակները ուսումնասիրել են ավելի քան 750 դեպք և պարզել է, որ ուսուցիչների մոտ ռեցիդիվի մակարդակը 3 երեք ամիս անց կազմել է 60%, իսկ վերապատրաստվողներինը 72%: Այս արդյունքները դիտվել են նաև Մարիապպանոմի և այլոց կողմից [23]՝ 25% կրկնությունով փորձառու վիրաբույժներ համար և 39% պակաս փորձառու վիրաբույժների համար: Բրազուի և միյուսները [28] հայտնեցին, ուժեղացնելով վերահսկողության և ռեզիդենտուրայում ուսումնառությունը, ռեցիդիվների հաճախականությունը երեք ամիսների ընթացքում հնարավեր եղավ իջեցնել 28%-ից 16%-ի: Մասնահատումից հե-

տո (ներառյալ լրացուցիչ տեխնոլոգիաների օգտագործումը, ինչպիսիք են ֆոտոդինամիկ ցիստոսկոպիան կամ նեղսպեկտրալ պատկերումը) պետք է նորից տեղադրվի 70 աստիճանի ոսպնյակ՝ ուռուցքը չթողնելու և համապատասխան հեմոստազ կատարելու համար:

Նեղսպեկտրալ պատկերումը նախատեսված է միզապարկի ուռուցքների ամբողջական մասնահատման համար. NBI-ն բաղկացած է լույսի երկո սպեկտորներից, որի կենտրոնում կապույտն է 415 նմ և կանաչ 540 նմ [29]: NBI-ն ներկառուցված է լույսի աղբյուրի և տեսախցիկի մեջ: Օգտագործելով միայն այս սպեկտորների փոխանցումը, ավելի հեշտ է նույնականացնել մազանոթները և այլ փոքր արյան անոթներ NBI տեխնոլոգիայի կիրառմամբ [30]: Մի քանի ուսումնասիրություններ ցույց են տալիս, որ ավելի բարձր BCa հայտնաբերումը, ինչը ամենակարևորն է, և այն տալիս է ավելի բարձր ապրելություն առանց ռեցիդիվների TURBT-ի օգտագործման ժամանակ [31, 32]: NBI-ի կիրառումը ներկանյութեր չի պահանջում, ունի ավելի բարձրուռուցքի հայտնաբերմա մակարդակ և կեղծ դրական արդյունքները համապատասխանաբար հավասար են սպիտակ լույսով ցիստոսկոպիայի (WLC) հետ [33]: Հերրը և ալյոք[34] գնահատել է 103 հիվանդի NMIBC ռեցիդիվով, և չնայած ռեցիդիվների 87%-ը կարելի էր տեսնել WLC-ով, 100% ախտահարումները պատկերվել են է NBI-ի միջոցով: Նասելլին և այլք [35] կատարեցին պրոսպեկտիվ, ռանդոմիզացված, վերահսկվող հետազոտություն, որում 1 տարի անց գրանցվել է ռեցիդիվի հաճախականությոան 10% տարբերություն, և պարզվել է, որ NBI-ի օգտագործումը, ուռուցքի կրկնության ռիսկը համեմատած WLC-ով TURBT-ի համապատասխանաբար կազմել է 33%,՝ 51%-ի դիմաց: Մոնտանարին և այլոք [36] ավելի ուշ հաստատեցին այդ արդյունքները՝ պրոսպեկտիվ ուսումնասիրություններում, որում հայտարարվեց ուռուցքի ռեցիդիվի հախակաանությունը 1 տարի անց՝ 35% NBI-ով և 50% միայն WLC-ն օգտագործելիս: Ըստ մեր փորձի, NBI-ն օպտիմալ է մնացորդային պապիլյար ուռուցքների հայտնաբերման համար նախնական սպիտակ լույսով մասնահատումից հետո: Այսպիսով, NBI – կիրառումը թույլ է տալիս հեռացնել փոքր ուռուցքները որոնք հնարավոր չէր հայտնաբերել վերահսկվող էնդոսկոպիաների ժամանակ և հնարավեր է օգնել որակել որպես նոր ուռուցքներ:

(ՖՑ) Ֆլուորեսցենտ ցիստոսկոպիա մեկ այլ մեթոդ, որը կարող է օգնել հայտնաբերել 10–20% միզապարկի ուռուցքները, որոնք չէին հայտնաբերվում WLC-ով, այն ֆոտոզգայունացնող ագենտի օգտագործումն է, որը հիմնականում կլանվում է նեոպլաստիկ բջիջների կողմից [37]: Հեքսիլամինոլեվուլինաթթու (HAL) իրենից ներկայացնում է 5-ամինոլեվուլինաթթվի (5-ALA) բարդ եթերայինային միացություն, որը բաղկացած է և առավել հաճախ օգտագործվում է որպես լուսազգայունացնող միջոց: 5-ALA կամ HAL-ը ներարկվում է միզապարկ վիրահատությունից 1 ժամ առաջ, և հեռացվում ցիստոսկոպիայի ժամանակ: Ուռուցքները կարելի է նույնականացնել իրենց կարմիր գունավորմամբ, երբ այն դիտարկվում է կապույտ-մանուշակագույն սպեկտրալ լույսի միջոցով: Կատարվել են բազմաթիվ ուսումնասիրություններ լրացուցիչ ուռուցքների հայտնաբերման, կրկնակի վիրահատությունից հետո մնացորդայի ուռուցքների հայնաբերման համար և առանց ռեցիդիվ ապրելոիությունը 5-ALA և HAL օգտագործմամբ [29, 38–40]: Գրոսման և ուրիշներ [41] և Յոհամ և այլք [42] երկուսն էլ հայտնել են Ta-ի ուռուցքների հայտնաբերման հաճախականության աճը 11%-ով: Կլինիկական առումով ամենակարևոր ազդեցությունը թողում է CIS-ի հայտնաբերման գործում: Բազմաթիվ ուսումնասիրություններ հաղորդում են նրա հայտնաբերման աճի մասին, որը տատանվում է 24%-ից 44% [42–44]: Այլ պրոսպեկտիվ, ռանդոմիզացված վերահսկվող հետազոտություն ցուց տվեց, որ միջին առանց ռեցիդիվից ապրելությունը կազմում է 9,6 ամիս՝ WLC խմբում, FC խմբի 16,4 ամիսների համեմատ [45]: Ջեավլետը և միյոսները [46] օգտագործել են HAL միզապարկի բարձր ռիսկի ուռուցքների ժամանակ հայտնել են որ 6 շաբաթ անց կրկնակի ռեզեկցիայից հետո վաղ հայտնաբերված ռեցիդիվների հաճախականությունը FC-ի համար կազմել է 11%, WLC-ի համար՝ 31%: Ընդհանուր առմամբ, ՖՑ-ի օգտագործումը կարող է երկարացնել ռեցիդիվի առաջացման ժամանակը NMIBC-ով հիվանդների մոտ:

Storz Professional պատկեր բարելավման համակարգ

Ինչպես NBI-ի դեպքում, Storz Professional-ի պատկերի բարելավման համակարգը (լրտեսներ. Կառլ Շտորց, Տուտլինգեն, Գերմանիա) ուժեղացնում է փոխանցվող պատկերի կապույտ ու կանաչ ալիքների երկարությունը և այդ բաղադրիչներից կառուցվում է եռագույն պատկրման սպեկտրալ մուտք: Այս ազդեցությունը ձեռք է բերվում կարմիրը սպեկտորը ճնշելու միջոցով: Տարբեր գույներ ավելացնելով կապույտ-կանաչ

պատկերին (օրինակ՝ նարնջագույն կամ մանուշակագույն), ստեղծվում է պատկեր SPIES պատկերման, որը տալիս է վիրաբույժին պատկերման երեք տարբերակ։

Հնարավորություն է տալիս ընտրելու բարելավման լավագույն մեթոդը տարբեր կլինիկական իրավիճակներում: Այս մեթոդի կլինիկական արդյունքները մի շարք հետազոտություններում ուսումնասիրվում են և դեռ չկան ամփոփիչ տվյալներ։ Ներվիրահատական բարդությունները հիմնականում սահմանափակվում են միայն միզապարկի թափածակումով և արյունահոսությամբ: Բարդությունները տատանվում են 5%-ից 43%, սակայն, ուսումնասիրությունների մեծ մասում հաղորդվում են 15%-ից պակաս դեպքեր: Նեյդերը և այլոք հաղորդումեն 2,3% արյունահոսության դեպքեր, որը պահանջում է արյան փոխներարկում [47]։ Բացի այդ, հեղինակները պարզել են, որ միզապարկի թափածակումը կազմում է 3.5%: Սովորաբար միզապարկի թափածակումը բուժվում է մշտական ուրետրալ կատետրի տեղադրմամբ, այնուամենայնիվ՝ միզապարկի ներորովայնային թափածակումը իրենից ենթադրում է ուռուցքիի նորորովայնային սերմանում և անհրաժեշտություն է պատռվածքը փակելու մեծ պատռվածքների ժամանակ [48]: Մեր կարծիքով, այս ցուցանիշներն ավելի բարձր են, քան փորձառուները ուրոլոգների մոտ։ Անհրաժեշտ է խուսափել միզապարկի թափածակումից, քանի որ նշանակալի հեմատուրիա կարող է առաջանալ դեպքերի 1%-ից պակաս դեպքերում:

Ներմիզապարկային քիմիոթերապիան առաջարկված է AUA-ի, EAU-ի և SIU-ի կողմից [3–5]: Ըստ միզապարկի քաղցկեղի միջազգային խմբի, ցածր ռիսկով ուռուցքները NMIBC – համար, առկա կրկնության ռիսկի բացարձակ իջեցում 17%-ով, միտոմիցին C-ով (MMC) միզապարկի ինստիլյացիայից հետո [49]: Լրացուցիչ ուսումնասիրությունները հաստատել են այն, որ այլ քիմիաթերապիայի դեղերը ավելի պակաս արդյունավետ են [48–51]: Այս ռիսկի նվազեցման պատճառները, հավանաբար բազմաֆունկցիոնալ է, սակայն հնարավոր է կախված լինել ուռուցքի սերմանումը նվազեցման հետ, ինչը կրկնության պատճառներից է։

Միզապարկի TUR կատարելիս պետք է հաշվի առնել տարբեր գործոններ։: Թերի մասնահատումը հանդիսանում է ստանդարտ երևույթ է և պահանջում է ջանասիրություն և պատշաճ պատրաստում, ինչպես ցանկացած այլ վիրաբուժական միջամտություն: Նոր տեխնոլոգիաները կարող են օգտագործվել ուռուցքների ամբողջական մասնահատման և հիվանդների բուժման արդյունավետությունը բարձրացնելու համար։

ЛИТЕРАТУРА

1. *Lee F., Patel H.R., Emberton M.* The 'top 10' urological procedures: a study of hospital episodes statistics 1998-99. BJU Int 2002; 90; PP. 1–6.
2. *Van Rhijn B.W., Burger M., Lotan Y., Solsona E., Stief C.G., Sylvester R.J.,* et al. Recurrence and progression of disease in non-muscleinvasive bladder cancer: from epidemiology to treatment strategy. Eur Urol 2009; 56; PP. 430–442.
3. American Urological Association: Guideline for the management of nonmuscle invasive bladder cancer (stages Ta, T1, and Tis): 2007 update. Linthicum, Maryland: American Urological Association 2007. Available at www.auanet.org.
4. *Babjuk M., Oosterlinck W., Sylvester R., Kaasinen E., Böhle A., Palou-Redorta J.* [EAU guidelines on non-muscle-carcinoma of the bladder]. Actas Urol Esp 2009; 33; PP. 361–371.
5. *Burger M., Oosterlinck W., Konety B., Chang S., Gudjonsson S., Pruthi R.,* et al. ICUD-EAU International Consultation on Bladder Cancer 2012: Non-muscle-invasive urothelial carcinoma of the bladder. Eur Urol 2013; 63; PP. 36–44.
6. *Herr H.W.* The value of a second transurethral resection in evaluating patients with bladder tumors. J Urol 1999; 162; PP. 74–76.
7. *Adiyat K.T., Katkoori D., Soloway C.T., De los Santos R., Manoharan M., Soloway M.S.* "Complete Transurethral Resection of Bladder Tumor": Are the Guidelines Being Followed? Urology 2010; 75; PP. 365–367.
8. *Zurkirchen M.A., Sulser T., Gaspert A., Hauri D.* Second transurethral resection of superficial transitional cell carcinoma of the bladder: a must even for experienced urologists. Urol Int 2004; 72; PP. 99–102.
